

Ո՞Ր ԿԸ ԿԱՅԱՆԱՅ ՀԱԼԵՊԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԻՆ ԱՐԺԷՔԸ

Posted on September 5, 2014 by Keghart



Category: [Opinions](#)



L. Շառոյեան, Հալէպ, Յուլիս 2014

For English version click on [Glorious Armenian Aleppo](#)

Այսպիսի հարցումի մը դէմ յանդիման չէինք գտնուած առ այսօր: Հալէպը, ամբողջ արտասահմանի ու Հայաստանի համար, քիչ մը կղզիացած, ինքնամփոփ, աւանդապահ գաղութ մըն էր, որ չունէր Փարիզի, Լոս Անճելըսի կամ Նոյնիսկ Պէյրութի հմայքն ու համբաւը: Պէյրութցիք, զորօրինակ (թող Ներողամիտ ըլլան), մի՛շտ ալ Հալէպին կը նայէին որպէս...յետամնաց գիւղ մը: Իբրեւ մխիթարական շքանշան՝ բոլորին կողմէ մեր լամբակին անցուեր էր «Մայր գաղութ»ի ոսկեայ պիտակը, ու մենք ուրախ էինք ստով...:



Վերջին երեք տարիներու Սուրիոյ պատերազմական աննախադէպ իրադարձութիւնները սակայն, մանաւա՛նդ Քեսապի խորհրդաւոր անցուդարձերը, ինչպէս նաեւ Հալէպի ողբալի վիճակն ու Նոր Գիւղի դիտաւորեալ մմբակոծումն ու համատարած քանդումները՝ լուսարձակի տակ առին մեր երբեմնի շէն ու «երագային» ոստանը: Ամէն ոք սկսաւ ողբալ «Մայր գաղութ»ի հաւանական կորուստը: Հայաշխարհը զօրաշարժի ենթարկուեցաւ՝ փրկելու համար Հալէպը, պահպանելու համար հալէպահայ արժէքները...:«Կոտրելէն ետք»...:

L. Շառոյեան, Հալէպ, Յուլիս 2014

For English version click on [Glorious Armenian Aleppo](#)

Այսպիսի հարցումի մը դէմ յանդիման չէինք գտնուած առ այսօր: Հալէպը, ամբողջ արտասահմանի ու Հայաստանի համար, քիչ մը կղզիացած, ինքնամփոփ, աւանդապահ գաղութ մըն էր, որ չունէր Փարիզի, Լոս Անճելըսի կամ Նոյնիսկ Պէյրութի հմայքն ու համբաւը: Պէյրութցիք, զորօրինակ (թող Ներողամիտ ըլլան), մի՛շտ ալ Հալէպին կը նայէին որպէս...յետամնաց գիւղ մը: Իբրեւ մխիթարական շքանշան՝ բոլորին կողմէ մեր լամբակին անցուեր էր «Մայր գաղութ»ի ոսկեայ պիտակը, ու մենք ուրախ էինք ստով...:



Վերջին երեք տարիներու Սուրիոյ պատերազմական աննախադէպ իրադարձութիւնները սակայն, մանաւա՛նդ Քեսապի խորհրդաւոր անցուդարձերը, ինչպէս նաեւ Հալէպի ողբալի վիճակն ու Նոր Գիւղի դիտաւորեալ մմբակոծումն ու համատարած քանդումները՝ լուսարձակի տակ առին մեր երբեմնի շէն ու «երագային» ոստանը: Ամէն ոք սկսաւ ողբալ «Մայր գաղութ»ի հաւանական կորուստը: Հայաշխարհը զօրաշարժի ենթարկուեցաւ՝ փրկելու համար Հալէպը, պահպանելու համար հալէպահայ արժէքները...:«Կոտրելէն ետք»...:

Կեանքի փիլիսոփայութեան անխախտ օրէնքն է: Բանի մը արժէքին կը գիտակցինք՝ զայն կորսնցնելէ ետք...: Բայց եկէ՛ք խորհրդածե՛ք միասնաբար,- Ո՛ր կը կայանայ հալէպահայ գաղութին արժէքը:

Որո՞նք են այս գաղութին առանձնայատկությունները, որո՞նք են անոր առաւելութիւնները՝ միւս գաղութներուն վրայ:

Շատ հպանցիկ ու արագ մատնանշումներ պիտի ընեմ միայն, թողլով որ մեր ընթերցողները իրենք անելիով արծարծեն սիւրբ, ջանաս իրենց մեկնաբանութիւններով կամ խոհերով՝ ամբողջացնել իմ գծած շրջածիրը:

Սկսիմք հալէպահայ գաղութին ԿՐՕՆԱԿԱՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ կեանքէն.-

Հալէպ իր մէջ ունի քրիստոնէայ 11 համայնքներ, որոնց երեքը հայ յարանուանութիւններն են (Առաքելական, Կաթողիկ, Աւետարանական): Լա՛ւապես կազմակերպուած համայնքներ են երեքն ալ, գործելու լայն հնարաւորութիւններով օժտուած: Հալէպահայ կրօնական-եկեղեցական կեանքը մի՛շտ եղած է աշխոյժ եւ օրինակելի: Ս. Քառասուն Մանկանց եկեղեցին ունի անելի քան 500 տարուան անցեալ: Մեր եկեղեցիները լեցուն եղած են միշտ՝ Կիրակի ու տօնական օրերուն: «Խուռներամ բազմութիւն» բացատրութիւնը ամենէն շատ Հալէպի եկեղեցիներուն կը պատշաճեր: Օ՛ր, անգամ մը փորձէիք ներկայ ըլլալ Մեծ Պահոց Արեւագալի արարողութիւններուն: Պիտի գմայլէիք: Մեր կամաւոր բազմանդամ Դպրաց Դասերը («կամաւոր» բառը կը շեշտեմ, որովհետեւ Եւրոպա ու Ամերիկա՝ դպիրներն իսկ ... կը վճարուին) կը թնդացնեն եկեղեցին՝ իրենց երգեցողութեամբ: Պսակի ու մկրտութեան համար՝ ամիսներ առաջ տեղ ու ժամ պիտի որոշէիք. այնքա՛ն շատ էին ատոնք...:

Կրնամ պնդել, որ հալէպահայոց եկեղեցական կեանքը, իր ճոխութեամբ ու անանդապահութեամբ, կը զիջեր մի միայն Պոլիսին: Մենք եկեղեցական հարուստ կեանք մը ունէինք այստեղ: Ի զուր չէր, որ Անթիլիասի միաբանները ստեպ կը սիրէին Հալէպ գալ ու պատարագել...: Իսկ կաթողիկոսներն ալ՝ առիթներ կը ստեղծէին ՀՈՎՈՒԿՊԵՏԱԿԱՆ այցեր շնորհելու: Ո՛չ մէկ գաղութ կրնար կարգաւորել-կազմակերպել այն ԱՐՔԱՅԱԿԱՅԵԼ ժողովրդային ընդունելութիւնները՝ զորս Հալէպ կ'իրականացնէր իր հովուապետերը ընդունելու համար...

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԱԼ ԴՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Հալէպահայ գաղութին այսօրուան եկեղեցական աշխոյժ կեանքը (որուն մասին խօսեցանք երէկ), անտարակոյս, մէկ երեսն է միայն ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԱԼ ԴՐՈՒԹԵԱՆ մը, որ սերունդէ սերունդ մեզի փոխանցուած է ժԹ. դարու վերջին տասնամեակներէն սկսեալ...: Այո՛, շուրջ մէկուկէս դարէ ի վեր Հալէպի թեմական-համայնքային կեանքը կը շնչէ 1863-ի (Պոլսոյ մէջ ընդունուած) Ազգ. Սահմանադրութեան սկզբունքներուն հետեւողականութեամբ, գէթ իր հիմնական կետերուն մէջ:

Ըստ այդ վաղեմի դրութեան, Ազգ. Առաջնորդարանը կեդրոնն ու պաշտօնական ներկայացուցիչն է հայ համայնքին, յաչս պետութեան: Թեմակալ առաջնորդը, «հոգեւոր պետ»ի իր բնականոն հանգամանքին զուգահեռ՝ նա՛եւ «ազգապետ»ն է համայնքին: Ու կը կրէ իր այս նոյնքան պատասխանատու հանգամանքին բոլոր պարտաւորութիւնները: Ներկայացուցչական իւրայատուկ դրութիւն մըն է ասիկա, Օսմանեան օրերէն ժառանգուած, որ ունի ԴՐԱԿԱՆ երեսներ, թէ՛ համայնքին զաւակները առանցքի մը շուրջ համախմբելու տեսակետէն, թէ՛ ալ պետական-պաշտօնական բազմադիմի շրջանակներու հետ յարաբերելու, երկխօսութիւն հաստատելու դիտանկիւնէն:

Ազգ. Առաջնորդարանի վարչամեքենան, եթե մօտեն սերտուի, իսկապես՝ «պետութեան մէջ պետութիւն մըն» է, այս բացատրութեան ամենէն ազնիւ ու դրական իմաստովը (Ժամանակին, Սուլթան Համիտ մեր Ազգ. Սահմանադրութիւնը կախակայեց ու տարիներով անգործութեան մատնեց՝ պատճառաբանելով որ անիկա «պետութեան մէջ պետութիւն մը» գոյացուցեր է...): Իր օրէնսդիր Գաւառական (երեսփոխանական) Ժողովով, անկէ բխած Քաղաքական ու Կրօնական Ժողովներով (գործադիր մարմիններ), Ուսումնական, Դատաստանական, Տնտեսական, Կրօնաբարոյական դաստիարակութեան, Ընկերային ծառայութեան Խորհուրդներով, Կալուածոց Յանձնախումբով եւայլն, համայնքային այս վարչամեքենան կրնայ նախանձը շարժել ոչ միայն սփիւռքի միւս գաղութներուն, այլեւ՝ տեղաբնակ միւս համայնքներուն, իսլամ թէ քրիստոնեայ...: Բարոյական մեծակշիռ հարստութիւն մըն է ասիկա, որ միաժամանակ ՋԻՂՆ ու ՉՍՊԱՆԱԿՆ է գաղութային եռուն կեանքին...:

Բաղդատեցէ՛ք այս պարագան Հիւսիսային Ամերիկայի, Լատին Ամերիկայի, Ֆրանսայի, Անգլիոյ, Աւստրալիոյ հայագաղութներուն հետ, ու շօշափելիօրէն պիտի տեսնէք ակներեւ տարբերութիւնը: Չորօրինակ, 300-400 հազար հաշուող Ֆրանսահայ գաղութին թեմական-համայնքային կեանքը որքա՛ն մեղկ է, թոյլ, վատոյժ: Դեռ նոր-նոր, սա վերջին քանի մը տարիներուն, Ֆրանսահայերը սկսան քայլեր առնել սեփական թեմական կանոնագրութիւն մը մշակելու ուղղութեամբ, կազմեցին Կրթական Խորհուրդ մը եւայլն...:

Համայնքային կեանքը ՈՂՆԱՅԱՐՆ է հալեպահայ գաղութին: Տակաւին, մեր երեցները յաճախ պատմած են մեզի, որ համայնքային կեանքը քիչ մը աւելի «եփուն» էր Հալեպի մէջ տասնամեակներ առաջ: Այս առթիւ, կը յիշեմ կարդացած ըլլալ Անդրանիկ Ծառուկեանի շահեկան մէկ յօդուածը հին «Նայիրի»ներուն մէջ, ուր ան կը պատմեր, թէ իբրեւ երիտասարդ լրագրող՝ ի՛նչպէս ներկայ կ'ըլլային (ինք եւ ուրիշներ) Հալեպի Ազգ. Գաւառական Ժողովի դռնբաց նիստերուն ու հետաքրքրութեամբ կը հետեւէին դահլիճին մէջ դեմ դիմաց բազմած ԵՐԿՈՒ ՀԱԿԱԴԻՐ ՃԱԿԱՏԵՐՈՒ Զինիչ բանավեճերուն...:

Ասիկա 40-ական թուականներուն էր: Ընտրական սնտուկներ, ժողովական թեկնածուներ, ընտրացանկեր, քուէախոյզ անաչառ յանձնախումբեր, ընտրեալներ ու պարտեալներ կային...: Տասնամեակներու սահանքին հետ շատ ջուրեր հոսած են անշուշտ կամուրջին տակէն: Հիմա պատկերն ու գոյնը կրնայ նոյնը չըլլալ, թէեւ «սնտուկ»ները մի՛շտ ալ կան ու պիտի ըլլան...Հալեպահայ գաղութը իր համայնքային դրութեամբ իսկ՝ ուժ մը, արժէք մը կը ներկայացնէ:

ՄԵՐ ԱՆՓՈՒԱՐԻՆԵԼԻ, ԱՆՆՄԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԸ

Հալեպը կրնա՞յ շնչել, կրնա՞յ ապրիլ առանց իր դպրոցներուն: Երեւակայելն անգամ կարելի չէ: Առանց դպրոցական իր աշխոյժ ու կենսատու ցանցին՝ Հալեպը կը կորսնցնէ իր բովանդակ փայլքը: Հալեպը կ'անշքանայ...: Միալած պիտի չըլլանք, եթէ ըսենք որ Հալեպի հայկական վարժարանները գաղութին ԹՈՔԵՐՆ ԵՆ: Առանց անոնց՝ բոլորս շնչահեղձ կ'ըլլանք: Եւ ի՛նչ պանծալի դպրոցներ,- Քարէն Եփփէ Ազգ. Ճեմարանը, պատմական Հայկազեանն ու Սահակեանը, Նորակառոյց Կիւլպէնկեանն ու Կրթասիրաց-Չեմպերճեանը, Լազար Նաճարեանն ու Կիլիկեանը, Միխիթարեանն ու միւսները...

Մեզի՝ հայկապահայերուս համար, շատ ընտանի ու սիրելի տեսարան մը կայ: Կրթական տարեշրջանի ամբողջ տեւողութեան, այս վարժարաններուն *օթօքարները* (որոնց երկաթեայ մարմնին վրայ խոշոր գիրերով ու հայերէնով արձանագրուած է դպրոցին անունը) կը շրջին թաղէ թաղ, կը կտրեն քաղաքին հրապարակներն ու պողոտաները եւ աշակերտները հաւաքելով՝ դպրոց կը բերեն...: Ես մի՛շտ ալ անօրինակ յուզում մը կ'ապրիմ այս պատկերին դիմաց, որովհետեւ մեր դպրոցները կը նմանցնեն Փեթմպի մը, ուր ամէն առտու մեղունները մուտք կը գործեն կարգապահօրէն ու կը ձեռնարկեն ՄԵՂՐԻ պատրաստութեան: Եւ Հալէպի մեղրը՝ արդար է ու անխարդախ...: Մեր այդ մեղրէն մենք մի՛շտ ալ բաժին կը հանենք արտասահմանի մեր արիւնակիցներուն: Մեր մեղրը բոլորի՛ն կը բաւէ...:

Սփիւռքի մեծ ու փոքր գրեթէ ամէն գաղութ ունի իր դպրոցը կամ դպրոցները,- Պոլիսը, Պէյրուզը, Թեհրանն ու Գահիրէն, Աթէնքը, Մարսէյլն ու Փարիզը, Լոս Անճելըսն ու Մոնրէալը, Սիտնիսն ու Պուէնոս Այրեսը: Բայց համարձակութիւնը պիտի ունենամ պնդելու, թէ վերոնշեալ քաղաքներու (ներառեալ՝...այժմու դիմափոխուած Պէյրուզը) դպրոցներէն գրեթէ ո՛չ մէկը կրնայ մրցիլ Հալէպի վարժարաններուն հետ՝ ՀԱՅԵՏԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ եւ ՀԱՅԵՐԵՆԻ ՋԱՄԲՈՒՄԻ դիտանկիւնէն: Կրնա՞ք սփիւռքեան ուրիշ վարժարան մը (իբրեւ միջուկ եւ դերակատարութիւն) համագործակցել, զորօրինակ, Հալէպի Ճեմարանին...: Կամ կրնա՞ք ցոյց տալ սփիւռքեան ուրիշ դպրոց մը, որ Հալէպի Հ.Բ.Ը.Մ.ի Լ.Նաճարեան-Գ. Կիւլպէնկեան Կեդր. վարժարանին նման ունենայ 1400 հայ աշակերտ... (այս թիւը երկրին այժմու պատերազմէն առաջ էր անշուշտ):

Հայախօսութիւնը, որքան ալ որոշ ընկրկումներ ապրի ատիկա՝ համատարած է մեր դպրոցներէն ներս թէ դուրս: Ոմանք կրնան զանգատիլ, ըսելով թէ Կրթ. Նախարարութիւնը «սեղմած» է հայերէնի դասապահերը՝ կրճատելով ու նուազեցնելով անոնց թիւը: Ո՛չ: Մեր համեստ կարծիքով՝ ճիշդ ու անվրէպ դիտարկում մը չէ ասիկա: Հայոց լեզուն ու գրականութիւնը մի՛շտ ալ գրաւած են իրենց արդար տեղը մեր դպրոցներու խճողեալ դասացուցակներուն մէջ, ու կ'աւանդուին գուրգուրանքով եւ պատշաճօրէն: Իսկ եթէ ունինք քանի մը հայ դպրոցներ, որոնք ԿԱՄՈՎԻՆ կրճատած են հայերէնի դասապահերը կամ ԼՐԻԲ ՋՆՋԱԾ ԵՆ զանոնք դասացուցակէն (իբրեւ «անպետ» առարկայ), հոս այլեւս մեկնաբանութիւնները աւելորդ կը դառնան...: Բարեացակամօրէն մեզի շնորհուած ԻՐԱԻՈՒՆԹԻ ՄԸ անտեսումն է անիկա...: Այսօր, խելայեղ պատերազմը շատ դժուարին կացութեան մը դէմ յանդիման դրած է Հալէպի հայկական դպրոցները, մանաւանդ ՏՆՏԵՍԱԿԱՆ գետնի վրայ: Կացութիւնը ահազանգային է: Հարկ է առատօրէն օժանդակել հայկապահայ դպրոցին, որպէսզի փեթակին մեղրը չդադրի...:

ՀԱԼԵՊ՝ ՄԱՐԴՈՒԺ ՀԱՅԹԱՅԹՈՂ ԿԱԹՍԱՅ ՄԸ

Արագ շրջապտոյտի մը ձեռնարկեցէք Հալէպի հայաշատ թաղամասերուն մէջ ու այցելեցէք մեր ակումբները: Երկլեզու (հայերէն-արաբերէն) ցուցանակներ ամրացուած են ատոնց մուտքին,- Արամ Մանուկեան Ժողովրդային Տուն, Հ.Բ.Ը.Մ.-Հ.Ե.Ը, Թէքեան Մշակ. Միութիւն, Նոր Սերունդ Մշակ. Միութիւն, Գերմանիկ-Վասպուրական Մշակ. Միութիւն, Ուրֆայի Վերածնունդ Մշակ. Միութիւն...

Այս ու ասոնց նման դեռ տասնեակ մը միութիւններ ու հաւաքատեղիներ՝ գիրկ բացեր են

բազմահարիւր, հազարաւոր հայորդիներու, որոնք հայկական դպրոցներէ շրջանաւարտ ըլլալէ ետք՝ հիմա հո՛ւս են, ակումբներու հայաշունչ երդիքին տակ, որպէսզի չկտրեն իրենց պորտակապը Ազգին հետ...: Ով ի՛նչ հակում կամ նախասիրութիւն որ ունի՝ գոհացում կրնայ գտնել այստեղ:

Երգե՛լ կ'ուզես,- մաս կազմէ Համազգայինի «Չուարթնոց» երգչախումբին (կը թուեմ խորհրդանշական անուն մը պարզապէս):

Թատերական ծիրքե՛ր ունիս,- քեզ կը սպասեն Բարեգործականի «Ադամեան» թատերախումբն ու «Չաւարեան»ը:

Պարարուեստի՞ սիրահար ես,- կան գործունեայ 2-3 որակաւոր պարախումբեր:

Գրչի ու գրականութեա՞ն սպասաւոր ես,- մասնակցիր Սուրիահայ Գրողներու Համախմբումի ամսական նիստերուն:

Նկարչակա՞ն ծիրքեր ունիս,- գնա՛ «Սարեան» կամ «Արշիլ Կորքի» ակադեմիաներ:

Մարզի՞կ ես,- թակէ դուռը Հ.Ս.Ը.Ս.ին...:

Սկառ՞ուտ կ'ուզես դարձնել զաւակդ,- լեռ ու բանակավայր բարձրացուր զայն՝ Հ.Ս.Ս.ի կամ Հ.Ս.Ը.Ս.ի վաշտերուն հետ:

Երիտասարդական շարժումներո՞ւ կ'ուզես սատարել,- ՍԵՄՆ ու ՏԽՐՈՒՆԻՆ կը սպասեն քեզ...:

Հայրենակցական ջի՞ող պիտի ջրդեղես,- խառնուէ՛ Մարաշի, Քիլիսի, Տիգրանակերտի, Չէյթունի, Տարօնի, ՈւրՖայի հայրենակցական միութեանց վարչութիւններուն...:

Բարեսիրական ու ինամատարական աշխատանքի՞ ատակ ես,- Ս.Օ.Խ.ը կրնայ գոհացնել քեզ:

Ու տակաւին ինչե՛ր եւ ինչե՛ր, որոնք Հալելայը վերածեր են «Փոքրիկ Հայաստան»ի մը...:

Մեր սրահները կը յորդին բազմութիւններով, որոնք կու գան հետեւիլ յաճախ զիրար խաչաձեւող մշակութային ձեռնարկներու կամ յոբելէնական տօնակատարութիւններու: Եւ այդ հաւաքները մենք կը սարքենք մեր ՍԵՓԱԿԱՆ շքեղ հանդիսասրահներուն մէջ, որոնց նմանները ո՛չ տեղացիները ունին, ո՛չ ալ արտասահմանի հայ գաղութները (բացի Պէյրութէն):

Այս լայնատարած ու բազմաբնոյթ «ազգային» կեանքին մէջ է որ կ'եռեւեփի հալելահայ գաղութը օրն ի բուն: Չորս միլիոննոց հսկայ քաղաքին մէջ՝ գրեթէ ԱՌԱՆՁՆԱՅԱՏՈՒԿ է ազգային-մշակութային այս անօրինակ պատկերը, որովհետեւ մեզի հետ կողք-կողքի ապրող մեր միւս (ոչ հայ) համաքաղաքացիները չեն կրցած ստեղծել կամ չունին մերիներուն համազօր պէսպիսուն կառոյցներ, ընձեռուած կարելիութիւններ...: Ահա՛ թէ ինչու՝ Հալելայը դարձեր է հայապահպանութեան ԻՏԷԱԼ վայր մը, բերրի հող մը, ուր իր աչքերը լոյսին բացող ևորածին երեխան ՀԱՅ կը ծնի ու անպայման ՀԱՅ կը մեռնի...:

Հետեւաբար, ահազանգը, զոր շատեր ինչեցուցին հալելահայ գաղութին հաւանական քայքայումին կամ ևօտրացումին առաջքն առնելու համար, տեղի՛ն էր ու արդար: Հալելայը հայկական տարաբնոյթ

մարդուժի կաթսայ մըն է: Այդ կաթսայէն է որ կը կերակրուին Լոս Անճելըսն ու Պոսթըրնը, Գարագասն ու Աթէնքը, Վալանսն ու Քուէյթը , եւ անշուշտ՝ Պէյրուզն ու Անթիլիասը...:

